

զատուր և անբուժելի վերքեր և սպիներ գոյաց-
նելու... Մենք ուշադրութիւն ենք պահանջում
այս ցաւալի իրողութեան մասին այն պարունե-
րի որոնք յանձն են առել զեկամար և առաջ-
նորդ լինելու այսպիսի անտէր և անօգնական
ժողովրդի...

Իմանում ենք, որ նոյն տեղի վրայի իշխան-
ները մի խնդիր են պատրաստել տեղութեանը
ներկայացնելու, որի մէջ յիշել են թէ իբր ի-
րանք հայոց եկեղեցու գաւթուժը արդէն կա-
ռուցել են ուսումնարան (որ ոչ թէ վրաց այլ
հայոց կառուցված է, ուրեմն և սեպհականու-
թիւն այս վերջիններս, վրացիք սեպհական ու-
սումնարան չունեն կառուցված), և խնդրում են
այժմ մի ուսուցիչ, և նրա վրա իրանք ստորագ-
րելով, ստորագրել են տուել և նոյն տեղի հա-
յերին, որ ամենին չեն գիտացել այն խնդրի
բովանդակութիւնը... Ահա այսպէս են ընթա-
նում մեր ազգային գործերը, պ. խմբագիր, թէ
ամեն մի անկիւնում պաշտօններով և իրա-
ւունքներով մարդիկ ունենք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ստացանք մի փոքրիկ, ութ երեսից բաղկա-
ցած բրօշուր հայերէն լեզուով, որ տպված է
Թիֆլիսում, Բ. Մարտիրոսեանցի տպարանում:
Բրօշուրի վերնագիրն է. «Սուրբ Էջմիածնի զան-
գակը» և ստորագրված է Թորոս ձիահեծանի:

Ա.Լ.ԲԱՍՄԱՆԻՍԻՍԻՍ մեզ գրում են. «Հաս-
տատ աղբիւրներից իմացանք, որ աւելանգրա-
ւորելի երեք պատգամաւորներից որոնք եկած
էին Էջմիածին Կաթողիկոսին ներկայանալու հա-
մար, նրանցից մի հոգի միայն իրաւունք ստա-
ցաւ ներկայանալ վիճաբանութիւն, իսկ երեքին միա-
սին ներկայանալը Մանկունին յարմար չը հա-
մարեց: Կաթողիկոսին ներկայացողը, ասում են
բժիշկ և եղբւր»:

Լսում ենք որ Թիֆլիսի մեր հայ նշանաւոր
բժիշկներից մին կանչված է Էջմիածին, Կաթողի-
կոսի անյուսակ ճիւղադպրութեան պատճառով:

Յիշեցնում ենք Թիֆլիսի հայոց հասարակու-
թեանը որ այսօր, ուրբաթ օր, պ. Ա. Թոխմա-
խեան կրկնելու է իր գաղափարները Արթուր-
նաւ թատրոնում:

ԱՍԻՍՏՈՎԻՑ մեզ գրում են. «Այս տարի Սա-
րատովի և Սամարայի նահանգներում շատ առատ
հունձ է սպասվում: Այստեղ շատ յաճախ կրկն-
վում են անձնատապալութիւններ: Տեղական պո-
լիցիան խիստ հակադրութիւն է անում կարգ պահ-
պանելու վրա, որպէս զի ուրիշ տեղ եղած հա-
կահրական շարժումներ այստեղ չը պատահեն:
Տեղիս գումարում հարց է յարուցված կոմս Լո-
րիս-Վէլիքովին ցաւակցութիւն յայտնել նրա
հրաժարականի մասին և առաջարկել նրան Սա-
րատովի պատուաւոր քաղաքացու կոչումը»:

Ղուբայից, պ. Յովհաննէս Տէր-Յակովբեանց
խնդրում է մեզ յայտնել որ «Մշակի» 82 համարի
մէջ տպված Ղուբայի նուիրատուների ցուցակի
մէջ մասն հետեւայ սխալները. Կոստանկ Կուզ-
նեցովի և Յովհաննէս Տէր-Յակովբեանցի անուն-
ները տպված էին, բայց յիշված չէր թէ որքան
գումար են նուիրել այդ պարոնները: Այժմ
յայտնում ենք որ առաջին պարոնը նուիրեց 1
րուբլ, իսկ երկրորդը 3 րուբլ:

Հարաւային Ռուսաստանի ուսումնարանները հա-
զորդում են որ Օդէսայում, Կիւիւում և ուրիշ քա-
ղաքներում հակահրեական անկարգութիւններից
յետոյ կալանաւորվածներից շատերին պօլիցիան
բօլգոօվ էր ծնում ու արձակում: Ասում են որ
մինչև անգամ մի քանի կանայք ենթարկվեցան
այդ պատիւին:

Այժմ լսում ենք որ Թիֆլիսի օրիորդական
խնամատուում և Ս. Նինայի իգական դպրոցում
վաճակված փողը ոչ թէ 120,000 է, այլ հասնում
է 150,000 րուբլ գումարի: Լսում ենք նոյնպէս,
որ իշխան Սիդամոն Լիւրստովի վրա, որ գանձա-
պահ էր այդ երկու դպրոցներում, արդէն դա-
տաստանական քննութիւն է նշանակված:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Սերբիայի իշխան Միլան, ինչպէս հա-
զորդում են լրագիրները, այժմ ճանապարհ-
հորդում է Եւրոպայի մէջ, որպէս զի հա-
մոզի մի քանի պետութիւններին չընդգի-
մանալ սերբիական իշխանութիւնը թագա-
ւորութիւն դարձնելու գործին: Իշխան Մի-
լան այցելեց Աւստրիայի, Գերմանիայի և
Ռուսաստանի մայրաքաղաքները և ամեն
տեղ նրան մեծ պատուով ընդունեցին: Այժմ
իշխանը Ս. Պետերբուրգի մէջ է:

Իշխան Միլանի ընդունելութեան մասին
Բելլինի մէջ ստացված են հետեւեալ տե-
ղեկութիւնները: Իշխան Միլանին երկա-
թուղու կայարանի մօտ Բելլինի մէջ ըն-
դունեցին նահանգապետը և կայսրի ազիւ-
տանները, որոնք առաջնորդեցին նրան պա-
լատը: Ժամի 2-ին իշխանին այցելեց կայսր
Վիլհելմ և այդ այցելութիւնը բաւական
երկար ժամանակ տեւեց: Միւս օրը պալա-
տի մէջ ի պատիւ իշխան Միլանի մի ծաշ-
կերդի կազմվեցաւ, որին ներկայ էին թա-
գաժառանգը, կայսերական տան անդամները,
բազմաթիւ զենեքաւոր և մինիստրներ:

Բէլլինից հաղորդում են, որ իշխան
Միլան կը վերադառնայ իր մայրաքաղաքը
մինչև օգոստոսի 2, երբ լինում է սերբիա-
կան ժողովրդական տօնը: Լրագիրները հա-
զորդում են, որ նա նորից կը ճանապարհ-
հորդէ Եւրոպայի մէջ իր ամուսնի հետ,
բայց առաջ իրան Սերբիայի թագաւոր կը
յայտնի, եթէ կը ստանայ Աւստրիայի,
Գերմանիայի և Ռուսաստանի համաձայնու-
թիւնը:

Ռուսաց լրագիրները յայտնում են հե-
տեւեալ մտքերը Սերբիայի մասին: Իշխան
Միլան առիթ չունի կասկածել Ռուսաստա-
նի համակրութիւնը և նրա դիպլոմատիա-
կան օգնութիւնը Սերբիան թագաւորու-
թիւն յայտնելու գործի մէջ: Աւստրո-Ուն-
գարիայի և Գերմանիայի համաձայնութե-
նից յետոյ բոլոր դժուարութիւնները Սեր-
բիան թագաւորութիւն յայտնելու համար
հեռացրած են: Սերբիայի կառավարութեան
և ժողովրդի ցանկութիւնը՝ պակսել իրանց
ազգային անկախութիւնը թագաւորական
բարձր արտոգոսով, շատ հասկանալի է, մա-
նաւանդ որ այդ արտոգոսը համապատաս-
խանում է սերբիական ժողովրդի դրու-
թեանը և նրա պատմական ցանկալի գա-
ղափարներին: Սերբիական վարկով հզօր
թագաւորութիւնը, որ գարեւոր արեւմտահեղ
պատերազմի օգնութեամբ նորից ձեռք է
բերել իր կատարեալ անկախութիւնը չէ
կարող բովմիւրայից ստոր մնալ, չէ կարող
իշխանութիւն լինել, քանի որ բովմիւրան
թագաւորութիւն է յայտնված: Իշխան Մի-
լանի կատարելապէս օրինաւոր ցանկութիւնը
անկասկած բաւականութիւն կը ստանայ և
Սերբիան կը բռնի իր տեղը Եւրոպայի պա-
լատական անկախ պետութիւնների շար-
քում:

Այդ գործը աւելի դրական նշանակու-
թիւն ունի Աւստրո-Ունգարիայի համար,
որ տիրում է հին սերբիական մի քանի եր-
կիրների վրա, որոնց ազգաբնակչութիւնը չէ
ծածկում իր համակրութիւնը զէպի իր
նախնին հայրենիքը: Բայց Աւստրիայի ազ-
գեցութիւնը Սերբիայի մէջ այժմ գերակշ-
ռող է և նա մի քանի զիջումներով կա-
մենում է այդ ազգեցութիւնը աւելի էլ
սաստակացնել: Սերբիան թագաւորութիւն
դառնալուց յետոյ նրա յարաբերութիւնները

Աւստրիայի հետ աւելի էլ բարեկամական
կը լինեն:

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական սենատը մերժեց պատգա-
մաւորների ժողովից հաստատված Բարբու-
շտրոգական օրինագիծը: Գամբետտայի
բազմաթիւ կուսակիցները չէին սպասում
այդպիսի կատարեալ անաջողութեանը և
կարծում էին, որ սենատը դուրս էր փոփո-
խէ օրինագիծի առանձին յօդուածները, բայց
ամբողջապէս չի մերժի: Հանրապետական
լրագիրները յօդուածները չեն համապա-
տասխանում այն սպասելիքներին, որ նը-
րանք անում էին սենատին, եթէ նա ընդ-
գիմարէր պատգամաւորների ժողովի վըճ-
ռին «République Française» լրագիրը
խոստովանում է, որ Գամբետտա և նրա
կուսակցութիւնը կատարելապէս յաղթված
են: Այդ լրագիրը կարծիք է յայտնում,
որ այդ գործի անաջողութիւնը կարող է
ապագայում նշանաւոր դժուարութիւններ
պատճառել և որ ընտրողական նոր ձեւի
պաշտպան հանրապետական կուսակցութիւնը
կը հասնի իր նպատակին, եթէ հարկաւոր
լինի մինչև անգամ սենատին վնասել:
Պատգամաւորների ապագայ ընտրութիւն-
ները կը վճռեն ոչ թէ միայն Բարբուշ-
տրոգի, այլ և սենատի վիճակը, որովհե-
տեւ, եթէ պատգամաւորների նոր ժողովը
թշնամարար վերաբերվի սենատի վերջին
քուէարկութեանը, ուրեմն սենատը յաղթ-
ված կը լինի և կերեայ, որ ժողովուրդը
պահարկում է նրա բռնած ընթացքը:
Իսկապէս դժուար չէ նկատել, որ «Républi-
que Française» լրագրի գաղափարները
հակասում են վիճելի հարցի գործնական
զրույթները: Սենատը նոյն իսկ այն պատ-
ճառով մերժեց պատգամաւորների ժողովի
վճիռը, որպէս զի միջոց տայ ընտրողներին
յայտնել իրանց կարծիքը ընտրողական ձեւի
մասին: Գոնեա այդ պատճառաբանութիւնը
զիստաւոր տեղ էր բռնում սենատի մասնա-
ժողի գեկուցման մէջ: Ժողովուրդը կարող
է հաւանութիւն տալ ընտրողական այս
կամ այն ձեւին, պատգամաւոր ընտրելով
այս կամ այն ձեւի ընտրութիւնների կու-
սակցին: Բայց ինչպիսի ընտրութիւններ էլ
պատահեն, Ֆրանսիական սենատը այնու-
ամենայն կը մնայ:

Այդ հարցին աւելի մեծ նշանակութիւն
են տալիս այն հանրապետականները, որոնք
միշտ թշնամի են եղած սենատի հիմնելուն
և որոնք այժմ կամենում են օգուտ քաղել
Գամբետտայի կուսակցութեան տրամադրու-
թենից սենատի գոյութեան մասին հին
վէճը բարձրացնելու համար: Արմատական
կուսակցութեան «Rappel» լրագիրը ար-
դէն մի յօդուած է տպել «սենատի կու-
րուստը» վերնագրով, որի բովանդակու-
թեան մասին կարելի է գտաւել վերնա-
գրից: Բայց Ֆրանսիական ժողովուրդը հա-
զիւ թէ յանձն կառնի կասկածանքի են-
թարկել ներկայումս գոյութիւն ունեցող
որ և է հիմնարկութիւն և այնպիսի հար-
ցեր բարձրացնել, որոնք կարող են կասկա-
ծելի դարձնել 1875 թուականի սահմանա-
դրութեան գործադրութիւնը: «Rappel»
լրագրի ցանկացած փորձերը կարող են շա-
հաւատ լինել հանրապետութեան թշնամի
բռնապետեանների և կղերականների հա-
մար, որոնք մերժում են այն օրէնքների
հեղինակութիւնը, որոնցով որոշվում է
Ֆրանսիայի պետական այժմեան կազմակեր-
պութիւնը:

ԱՆԳԼԻԱ

Կանանց կալուածական միութեան ան-
գամ և հրապարակախօս օրիորդ Աննա Պար-
նել աւելի արմատական մտքեր է յայտնում
զանազան ժողովների մէջ, քան թէ նրա
եղբայրը և մի և նոյն ժամանակ, իբրեւ կին,
օգուտ է քաղում պօլիցիայի ներողամու-
թենից: Նորիւրում օրիորդ Պարնել մի ճառ
արտասանեց Տուլի մէջ: Նրան շրջապակ
էր կանանց հասարակութիւնը, իսկ տղա-
մարդիկ դուրսը այնքան էին հաւաքվել, որ
անցնելու տեղ չը կար: Չիտուր ժողովարձ
ները ի զուր տեղ աշխատում էին հեռաց-
նել տղամարդկերանցը, նրանց մտաւրի
հարուածներով դուրս արին: Այնուհետեւ
օրիորդ Պարնել իրան լսող կանանց հետ
մտաւ եկեղեցու բակը, որտեղ շարունակ-
վեցաւ նրանց ժողովը: Հրապարակախօս օ-
րիորդը գլխաւորապէս յարձակվում էր պո-
լիցիայի վրա, զգուշացնելով իրան լսող կա-
նանցը պօլիցիայի շողոքորթող խորհրդաւո-
թենից: Բացի այդ օրիորդը աւելացրեց, որ
Ֆորստեր գաղտնի հրահանգներով պատուի-
րել է պօլիցիային ձեռք բերել տղապե-
րների հաւատարմութիւնը:

Այս ընդհանուր ատելութիւնը զէպի
պօլիցիան մի նոր շրջան է կազմում իրան-
գական անկարգութիւնների պատմութեան
մէջ: Գեռ նորիւրում կալուածական միու-
թիւնը հրամայում էր իր գործակալներին
զանազանել դատաստանական վճիռները կա-
տարողներին հասարակ պօլիցիականներից:
Առաջինները չարագործներ էին համարվում,
երկրորդները նրանց ակամայ գործիքներ
իսկ այժմ բոլորն էլ միատեսակ ատելի են
դարձել իրանգացիների համար, այնպէս որ
պօլիցիական գործակատարի հետ խօսելը
փախաւոր է դարձել: Ձիւղուրները գեռ
ևս պահպանել են իրանց հեղինակութիւնը
ամբոխի մէջ, մինչդեռ պօլիցիականները
կատարելապէս քարկծվում են ժողով-
րից: Քանի որ զինուորներն էլ սկսել են
մասնակցել Ֆերմերներին արտաքսելու գոր-
ծին, նրանք էլ կորցնում են իրանց հեղի-
նակութիւնը:

Արդի հետեւ լուր տարածվեցաւ, թէ Տու-
լի մէջ կալանաւորված է մի յարգված Ֆեր-
մեր, այնտեղ մի քանի հազար մարդ հա-
ւաքվեցաւ: Ամբոխը կտրանց հեռագրական
թիւերը, փչացրեց ճանապարհները և կա-
մուրջները: Այդ կոմունիստական մէջ շատ
գործեր ուղարկվեցան Մի քանի այլ կոմ-
սոթիւնների մէջ պատերազմական դրու-
թիւն է յայտնված:

Իրլանդիայի նահանգներից մէկի մէջ նո-
րիւրում մի ազգաբարութիւն տարածվեցաւ,
որից երեւում է Իրլանդիայի այժմեան տրա-
մադրութիւնը: Այդ ազգաբարութիւնը
սպառնում է մահով մի Կեննեդին և նրա
մէջ ի միջի այլոց ասված է. «Այդպիսի
անպիտաններին պէտք է կոտորել, եթէ
մինչև անգամ նրանց պաշտպանէին թա-
գուհու բոլոր գործերը: Մենք այլ ևս չենք
համբերի կալուածատէրերի բռնաւորու-
թիւնը, որոնց վերջին ժամը արդէն հասել
է: Կորչեն կալուածատէրերը: Հողը պատ-
կանում է իրլանդական ժողովրդին, որ
նրան իր քրտինքով նրա համար չէ ջրում,
որ այդ հողի պտուղներով ձրիակները
ապրեն: Կորչեն բռնաւորները»:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական կիսապաշտօնական լրագրի-
ները հերքում են այն լուրը, իբր թէ իշ-